Գրանդ Հոթել Երևան Հյուրանոցի Ներքին Կանոնակարգ

• Հյուրին չի թույլատրվում զբաղվել գործունեությամբ կամ թույլ տալ որևէ անօրինական գործողություն, որը կարող է հանգեցնել սեփականության իրավունքների խախտման հատկապես հյուրանոցի ինտերնետ կապից օգտվելիս:

• Հյուրը պատասխանատվություն է կրում հյուրանոցի գույքին հասցված ցանկացած կորստի կամ վնասի համար, որը պատճառվել է իր, իրենց հյուրերի կամ ցանկացած անձի կողմից, ում համար իրենք պատասխանատու են:

• Գրանդ Հոթել Երևանը չի առաջարկում կորած իրերի ապահովագրություն. յուրաքանչյուր համարում առկա է էլեկտրոնային անվտանգության պահարան՝ թանկարժեք իրերը պահելու համար:

• Համարների առկայությունը չի կարող երաշխավորվել վաղ ժամանումների համար, եթե նախապես համարը ամրագրված չի: Վաղ մուտքը կամ ուշ ելքը ենթակա է վերահաստատման Վահառի և ամրագրման թիմի կողմից: Վաղ մուտքը (ժամանումների համար՝ սկսած 07.00-ից) և ուշ մեկնումը մինչև ժամը 19:00-ն ենթակա է հավելյալ գանձման՝ համարի արժեքի 50%-ի չափով:

• Խնդրում ենք տեղեկացնել, որ ամրագրման օրերի կրճատումը պետք է կատարվի մեկնման օրվանից 24 ժամ առաջ: Մինչև այս վերջնաժամկետը ձեր ամրագրումը չկրճատելը կհանգեցնի մեկ գիշերվա տուգանքի:

• Ժամանման ամսաթվից ուշ քան 2 օր առաջ կատարված չեղարկումների համար կգանձվի մեկ գիշերվա ամբողջ արժեքը:

• Խնդրում ենք հաշվի առնել, որ ամրագրման ցանկացած փոփոխություն կարող է հանգեցնել սակագնի փոփոխման:

• Հյուրի կեցության ընթացքում հյուրանոցը կարող է հյուրից պահանջել ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ՝ նունականացման քարտ, անձնագիր, որը տրվում է գրանցման ժամանակ՝ որպես հյուրի՝ հյուրանոցում գտնվելու ապացույց:

• Հյուրանոցի տարածքում ծխելն արգելված է: Ցանկացած խախտում հանգեցնելու է տուգանքի՝ 50 000 դրամի չափով:

• Հյուրանոցն իրեն իրավունք է վերապահում մտնել ապրող հյուրի համար, եթե հնարավոր չի եղել կապ հաստատել հյուրի հետ առնվազն 24 ժամ: Տվյալ դեպքում հյուրանոցի մաքրուհին կարող է համարը ստուգել միայն անվտանգության ծառայության ներկայությամբ:

•Ալկոհոլի օգտագործումը թույլատրվում է միայն նշանակված վայրերում: Հյուրերի կողմից ոչ պատշաճ վարքագիծը, ներառյալ բարձր աղմուկը, խանգարող գործողությունները կամ այլ հյուրերի կամ անձնակազմի նկատմամբ ոտնձգությունները խստիվ արգելվում են: Հյուրերին, ովքեր անհարգալից են մյուսների նկատմամբ կարող է պահանջ ներկայացվել լքել հյուրանոցի տարածքը առանց գումարի վերադարձի:

• Այս կանոնները չպահպանելը կարող է հանգեցնել լրացուցիչ գանձումների, հյուրանոցից հեռացման կամ ապագա ամրագրումներ չընդունելուն: